

ԳՈՐԳԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ  
ԱՐՈՒԵՍՏԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ  
ԴՈՒՐՍ ԵՒ ՀԱՅԵՐԸ

ՊԱԼՔԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՁ

Բռնի կամ ակամայ գաղթականութիւններով հայերը շատ կանուխէն հաստատուած էին Պալքանեան հողամասին վրայ: Անոնք իրենց հայրենի արհեստներուն եւ արուեստներուն հետ հոն տարած են նաեւ հիւսուածեղէնի եւ դորդաշինութեան արուեստները:

«Բուլղարները գերեցին 813 թուին տասնեակ հազար մարդ Ադրիանապոլսից: Ուրիշ աղբիւրից գիտենք որ հետեւեալ տարին նոյնպէս մեծ գերութիւն հանեցին, ապստակ սփռելով մինչեւ Արկադիոպոլ եւ դարձին գերի տարին 50,000 ամբոխ: Թէ սրանց ոչ աննշան մասը հայեր էին, երեւում է ոչ միայն նրանից, որ առաջնորդները, ինչպէս տեսանք, Հայ էին, այլ եւ որ աւարի եւ կողոպուտի մէջ յիշատակւում են յատկապէս Հայկական բանուածներ եւ ազնիւ դորդեր, զգեստեղէն եւ պղնձեղէն. (Armeniatika Stranglom-lotaria, Naketageta, Anotera, Himatismosn, Chalkomata. Sor. Inc. 347)»<sup>(1)</sup>:

Դժբախտարար առ այժմ ի վիճակի չենք Պալքանեան բազմակզու գրականութեան եւ պատմական յիշատակարաններուն մէջէն ուրիշ վիպութիւններ ալ բերելու, որոնցմէ անտարակոյս շատ կարեւորներ ըլլալու են: Կը բաւէ յիշել որ Ադրիանապոլսոյ մէջ մշակոյթով վարդացած մեծ հայ գաղութ գոյութիւն ունէր ԺԱ դարուն, ուր կը գըրուէր մեծարժէք Աւետարան մը 1007 թուականին (այժմ վենետիկի մեր վանքը): Իսկ Պաշգովայի մէջ 1084ին հայ վանք մը կը շինուէր Բակուրեան եղբարց կողմէն:

Հայկական մշակոյթի (ճարտարապետութեան, հիւսուածեղէններու եւն.) ազդեցութեան անխափան վիպներ խիստ առատ են Թրակիոյ, Պուլկարիոյ, Սերպիոյ, Մակեդոնիոյ, Ռումանիոյ, Թրանսիլ-

(1) Վասիլ Հայազն: - Գրեց՝ Պրոֆ. Ն. Ադոնց: «Հայրենիք» ամս. 1931, թիւ 8, էջ 90: